ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **10/հունվարի/2024 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....8..... անդամներ:

Բացակա էին՝ Յ. Հիրանեյանը, Մ. Համբարձումյանը, Մ. Մկրտչյանը, Ժ. Բաբայանը, Ա. Հովսեփյանը, Ս. Տիմոֆեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը

Նիստը վարում էր ՁԵՐՄՈՒԿ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 10-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը՝

1.1. Ջերմուկ համայնքի բյուջեի միջոցների 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----8------ *Դեմ*----0-------- *Ձեռնպահ*-0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան

1. Ջերմուկ համայնքի բյուջեի վարչական մասի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 43,967,158.9 (քառասուներեք միլիոն ինը հարյուր վաթսունյոթ հազար հարյուր հիսունութ դրամ իննսուն լումա) գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա՝ էներգետիկ, կապի, կոմունալ, մասնագիտական և հարկային պարտավորությունների մարմանը, ապրանքանյութական արժեքների, պաշարների ձեռք բերմանը, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 5,449,740.2 (հինգ միլիոն չորս հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր քառասուն դրամ, 20 լումա) գումրն ուղղել կապիտալ ծախսերի (սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում) համաֆինանսավորմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---- *Դեմ*----0-------- *Ձեռնպահ*----0-------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 103-Ն որոշման 2-րդ կետը և 2024 թվականի հունվարի 10-ի «Ջերմուկ համայնքի բյուջեի միջոցների 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին» N 2-Ա որոշումը՝

1. Ջերմուկ համայնքի բյուջեի եկամտային մասի «38-01-00- պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ» գործառնական նշանակության «0069-Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբվենցիաներ» գործառնական նշանակության տնտեսագիտական հոդվածը ավելացնել 94,659,000.0 ՀՀ դրամով, «29-50-00-հողի օտարումից մուտքեր» գործառնական նշանակության «0058-հիմնական միջոցների օտարումից մուտքեր» տնտեսագիտական հոդվածը՝ 17,387,860.0 ՀՀ դրամով, «38-06-00-այլ աղբյուրներից դրամաշնորհ» գործառնական նշանակության «0026-կապիտալ արտաքին դրամաշնորհ՝ ստացված միջազգային կազմակերպություններից» տնտեսագիտական հոդվածը՝ 11,426,000.0 ՀՀ դրամով:

2. Ջերմուկ համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշիվներում կատարել հետևյալ փոփոխություններն ու ներքին վերաբաշխումները՝

2.1 ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և Ջերմուկի համայնքապետարանի միջև 2023 թ. սեպտեմբերի 22-ին կնքված կապիտալ սուբվենցիայի հատկացման N 09/23 պայմանագրին համապատասխան՝ Ջերմուկ քաղաքի ճոպանուղու գլխավոր ճոպանի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53, 210002-«Ջերմուկի ճոպանուղի սուբվենցիա» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5113- շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգում» և «4861- այլ ծախսեր» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 26,856,400.0 և 10,269,000.0 ՀՀ դրամով:

2.2 Բաժին 08, խումբ 02, դաս 06, ծրագիր 51,210002- «կինեմատոգրաֆիա» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5112- շենքերի և շինությունների կառուցում» և «5113-շենքերի և շինությունների կապիտակ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 1,440,000.0 և 3,560,000.0 ՀՀ դրամով:

2.3 Բաժին 06,խումբ 02, դաս 01,ծրագիր 51,210002- «համայնքների զարգացում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5113- շենքերի և

շինությունների կառուցում» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 71,845,600.0 ՀՀ դրամով:

2.4 Բաժին 06, խումբ 03 դաս01, ծրագիր 51,210002 - «Գնդեվազ գյուղի ոռոգման ցանցի ընդլայնում» գործառնական նշանակության «5112- շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական հոդվածը համայնքի և պետության մասնաբաժինների հատկացման համար պակասեցնել համապատասխանաբար 5,661,700.0 և 16,985,300.0 ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով նախագծանախահաշվային փաստաթղթերի վերջին փոփոխությունները:

2.5 Բաժին 11 , խումբ 01, դաս 02, ծրագիր 51,210002- «պահուստային ֆոնդի» գործառնական նշանակության «4891- պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 33,698,158.9 ՀՀ դրամով:

Նախորդ տարվա սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման համար՝

2.6 Բաժին 06,խումբ 03,դաս 01,ծրագիր 51,210002 - «Գնդեվազ գյուղի խմելու ջրի ջրագծի և ակունքի հիմնանորոգմներ» գործառնական նշանակության ՝ համայնքի և պետության մասնաբաժինների հատկացման համար «5113- շենքերի և շինությունների կապիտակ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածը ավելացնել համապատասխանաբար 425,200.0 և 38,732,600.0 ՀՀ դրամներով:

2.7 Բաժին 06, խումբ 04, դաս 01, ծրագիր 51,210002 - «Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության ցանցի կառուցում»- գործառնական նշանակության «5112-շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական հոդվածը համայնքի և պետության մասնաբաժինների հատկացման համար համապատասխանաբար ավելացնել 26,400.0 և 4,646,900.0 ՀՀ դրամով:

2.8 Բաժին 04,խումբ 05, դաս 01, ծրագիր 51,210002- «Ջերմուկ քաղաքի Զախափնյակ թաղամասի 7-րդ և 22–րդ շենքերին կից աստիճաների հիմնանորոգում» գործառնական նշանակության «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագտական հոդվածը համայնքի և պետության մասնաբաժինների հատկացման համար համապատասխանաբար ավելացնել 104,200.0 և 3,932,300.0 ՀՀ դրամով:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ սույն որոշման հավելվածին համապատասխան ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեն՝ 2024 թվականի հունվարի 10-ի դրությամբ՝

Ընդամենը՝ *եկամուտների գծով- 984,139,0 հազար ՀՀ դրամ*

ծախսերի գծով- 984,139.0 հազար ՀՀ դրամ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ն/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բացակա
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	բացակա
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Վարդան Մարգսյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը՝ _____